INECOBANK

Գնառաջարկի հայտարարություն-հրավեր

1. Ինեկոբանկ ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիզկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ դյուրակիր համակարգչի մատակարարման համար:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 11.04.2024, 17:00

- Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը -11042024/նոթբուք: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել „rarե տարբերակով, կոդավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո procurement@inecobank.am էլ Հասցեով մինչև 12.04.2024թ-ին մինչև ժ. 11:00 :

- Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ "Ինեկոբանկ" ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝
   - ԳՆՀ կոդը -12042024/նոթբուք
   - մասնակցի անվանումը,
   - ներկայացման ամսաթիվը,
   - ստացող՝ ,Ինեկոբանկե ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:
3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
   Կոնտակտային անձինք՝

   *1. Ադմինիստրատիվ ստորաբաժանում, գնումների բաժնի պատասխանատու աշխատակից* ***Լուիզա*** *Ղազարյան,* ***+37433008896,***

   *2.Մասնագիտական հարցերի քննարկման համար՝ Տեխնիկական բաժնի ղեկավար՝* ***Սուրեն*** *Հովհաննիսյան՝* ***+37443002262***

4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ:Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և 'Հրապարակային սակարկությունների մասին' ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝

   - Գնառաջարկ,
   - Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
   - Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ),
   - Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոններին համաձայնությունը
   - *(ցանկացած այլ չափանիշ՝ սահմանված Կարգի 6.3.4.3.1 կետով)*:
8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
13. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:

14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

**ԳՆԱՌԱՋԱՐԿ**

**Ինեկոբանկէ ՓԲԸ-ի** դյուրակիր համակարգչի մատակարարման **հարցում**

| | Գնման առարկայի անվանումը | Քանակը | Միավորի արժեքը ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ | Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | • CPU cores (միջուկներ)՝ նվազագույնը 2, պրոցեսորի արտադրողականությունը PassMark - CPU Mark (www.cpubenchmark.net) թեստի արդյունքում պետք է ունենա ոչ պակաս քան 34762 միավոր, պրոցեսորը պետք է 64 բիթանոց հրահանգների ապահովում ունենա<br>• Օպերատիվ հիշողություն՝ նվազագույնը , 32GB DDR4 եւ բարձր<br>• Կոշտ սկավառակ՝ նվազագույնը 1 հատ 500GB SSD, պետք է ունենա կտրուկ շարժումների ժամանակ ավտոմատ անջատվելու հնարավորություն<br>• Օպերացիոն համակարգ՝ Windows 10Pro / Winwows 11Pro ՕՀ<br>• Աուդիո անցք (մուտք, ելք)<br>• USB<br>• Ցանցային քարտ՝ ոչ պակաս քան 100/1000 Մբիթ/վրկ (RJ 45)<br>• Անլար կապ՝ նվազագույնը wifi 802.11 bgn<br>• Ավտոնոմ աշխատանքի ժամկետ՝ նվազագույնը 4 ժամ<br>• Մոնիտոր՝ արտաքին տեսքին անհատական ընտրություն, Էկրանի խտություն՝ ոչ պակաս, 1920x1080 Տեխնալոգինա IPS<br>• Երաշխիք՝ ոչ պակաս քան 3 տարի • TPM մոդուլի առկայություն • Վիդեո ելք՝ նվազագույնը մեկական 2xHDMi կամ TYPE-C input | 1<br>հ ատ | | |

*Առաջարկում ենք կատարել մատակարարումը___________ օրացուցային օր ժամանակահատվածում:*

*Պահանջվող կանխավճար___________________________________դրամ:*

_____________________________________________*Մասնակցի/կազմակերպության անվանումը*

__________________________________________*Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝*

" " ____________*2024թ*

*Կ.տ*